

**ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ**  
**«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ԳԻՏԱԿԱՆ ՀՈՐՎԱԾՆԵՐԻ**  
**ԺՈՂՈՎԱԾՈՒԻ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

- 1.1. Սույն կանոնները սահմանում է «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածուի (այսուհետ՝ ժողովածու) գիտական հրապարակումների համար ներկայացվող էթիկական, ակադեմիական ազնվության պահանջները և չափորոշիչները (էթիկայի կանոններ):
- 1.2. Սույն էթիկայի կանոնների իրավական հիմքերն են «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, Համալսարանի կանոնադրությունը, ՀԵՀ էթիկայի կանոնակարգը, ՀԵՀ ակադեմիական ազնվության կանոնակարգը և այլ իրավական ակտեր:
- 1.3. Էթիկայի կանոնները ներդրվում են ժողովածուի գիտական հրապարակումների բարձր որակը և պատշաճ գիտական մակարդակը ապահովելու նպատակով:
- 1.4. Սույն կանոնները տարածվում են ժողովածուի խմբագրական կազմի, հոդվածագիրների, գրախոսների վրա (այսուհետ՝ շահառուներ):
- 1.5. Սույն կանոնները և նրանում կատարված փոփոխությունները և լրացումները հաստատվում են ՀԵՀ գիտական խորհրդի կողմից:

**2. ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԷԹԻԿԱՅԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

**2.1. ՀԵՀ ժողովածուի հոդվածագիրները պարտավոր են.**

- ա) գերծ մնալ ակադեմիական ազնվության խախտման հնարավոր դեպքերից,
- բ) չարտատպել այլոց աշխատանքը և ներկայացնել՝ որպես սեփական գիտական արդյունք,
- գ) տրամադրել գիտականորեն հիմնավորված և տեխնիկապես պատշաճ բովանդակությամբ գիտական արդյունք,
- դ) պահպանել գիտական գրագրության պահանջները, գերծ մնալ հոգեհուզական, զգայական, վիրավորական և այլ ոչ գիտական ձևակերպումներից,

- ե) գերծ մնալ սեփական նեղ քաղաքական, խմբակային շահը և գիտականությանը հակասող այլ հավակնությունները գիտական աշխատանքում արտացոլելուց,
- զ) ապահովել գիտական հոդվածի ինքնատիպությունը և յուրօրինակությունը,
- է) ներկայացնել այնպիսի աշխատանք, որը դեռևս չի հրատարակվել որևէ այլ պարբերականում կամ հանդեսում,
- ը) պատշաճ կերպով տալ հղումները՝ նշելով սկզբնաղբյուրի հեղինակին, աշխատանքի անունը, հրատարակչությունը, էջերի քանակը,
- թ) խուսափել լայնածավալ մեջբերումներից և քաղվածքներից, որոնք անհարկի ծանրաբեռնում են հոդվածի բովանդակությունը,
- ժ) թույլ չտալ տվյալների և փաստերի կեղծում, դրանց նենգափոխում,
- ի) գերծ մնալ նախկին գիտական արդյունքների անհարկի կրկնություններից,
- լ) գիտական աշխատանքում նշել համահեղինակների անունները կամ այն անձանց, որոնք նշանակալի նեղրում են ունեցել գիտական արդյունքի մշակման գործում,
- խ) հարգել գրախոսների և այլախոհ կարծիք հայտնողների տեսակետները,
- ծ) ողջամիտ ժամկետներում շտկել և վերանայել թերությունները, սխալները,

**2.2.** Տպագրության փուլում գտնվող հոդվածները հեղինակի կողմից չեն կարող վերադարձվել և հանվել տպագրությունից:

**2.3.** Գիտական աշխատանքը՝ սահմանված պահանջներին անհամապատասխանության դեպքում մերժվում է կամ ուղարկվում հոդվածագրին այն վերանայելու համար:

**2.4.** Հեղինակները պատասխանատու են իրենց ներկայացրած գիտական արդյունքների արժանահավատության և դրանց իսկության համար:

**2.5. Ժողովածուի խմբագրական խորհրդի անդամները և գրախոսները պարտավոր են.**

- ա) անաչառ և անկողմնակալ կերպով դիտարկել ներկայացված հոդվածները,
- բ) չցուցաբերել տարբերակված և խտրական վերաբերմունք՝ պայմանավորելով հոդվածագրի ազգային պատկանելությամբ, սեռով, կրոնական և քաղաքական համոզմունքներով և այլ անթույլատրելի հանգամանքներով:

գ) գիտական արդյունքները դիտարկելիս ցուցաբերել պատշաճ գիտական մոտեցում՝ առանց ապակառուցողական և անհարկի դիտողությունների և առաջարկների:

դ) չհրապարակել ներկայացված գիտական հոդվածը կամ այլ կերպ հասանելի դարձնել երրորդ կողմին, եթե վերջինս գրախոսը չէ: